ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/4-1»

ք. Երևան «12» մարտի 2021թ.

Վարչապետի աշխատակազմը, ի դեմս Վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական Գ. Բոշյանի որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեխնոինժիներինգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայությունների առավելագույն գինը կազմում է 1650000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

1-ին չափաբաժնի համար՝ 11760 (տասնմեկ հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժնի համար՝ 129500 (մեկ հարյուր քսանինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

1-ին չափաբաժնի համար՝ 28000 (քսանութ հազար) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժնի համար՝ 185000 (մեկ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	ք.Երևան, Եղբայրության 1-ին նրբ. 14
Կառավարական տուն, 1	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1510052737280100
Հ/Հ 900011024065	ՀՎՀՀ 02290157
ՀՎՀՀ 02505554	
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » մարտի 2021 թ. կնքված
***«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/4-1»** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը*
1	50311120-1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ՝ համաձայն Հավելված N 1.1-ի աղյուսակ 1	դրամ	1350000	1	ք.Երևան, Կոմիտասի 49/2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25
2	50311120-2	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ՝ համաձայն Հավելված N 1.1-ի աղյուսակ 2	դրամ	300000	1		

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024065
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ
ք.Երևան, Եղբայրության 1-ին նրբ. 14
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510052737280100
ՀՎՀՀ 02290157

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 12 » մարտի 2021 թ. կնքված
«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/4-1» ծածկագրով պայմանագրի

Աղյուսակ 1

	Տպիչների պահպանման և վերանորոգման ծառայություններ	Ենթածառայության միավոր գինը* /ՀՀ դրամ/
Չափաբաժին 1. *Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ*	Լիցքավորում լազերային քարթրիջների ներառյալ տոները HP LG 5L/6L(Canon EP A)/1100(Canon EP 22), 1200 (Canon EP 25)/1300/1150/1160/1320/2015, (HP LJ 5L/6L(Canon EP A)/HP LJ 1100(Canon EP 22)/HP LJ 1200(CanonEP25) /1300/1150/1160/1320/2015) , Canon 6300, Samsung 1660,1640 տեսակի տպիչների համար	**1260**
	Լիցքավորում լազերային քարթրիջների ներառյալ տոները HP LJ 1010,1012,1015, 1018, 1020, 1022 (HP LJ 1010,1012,1015, 1018, 1020, 1022 Q2612A (Canon 303/703)) տեսակի տպիչների համար	**1260**
	Լիցքավորում լազերային քարթրիջների ներառյալ տոները PANTUM M6550NW (Print, Copy, Scan) տեսակի տպիչների համար	**1260**
	Լիցքավորում լազերային քարթրիջների ներառյալ տոները Canon 725 տեսակի տպիչների համար	**1260**
	Լիցքավորում լազերային քարթրիջների ներառյալ տոները Xerox Phaser 3010 տեսակի տպիչների համարս	**1260**
	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Տեֆլոնե լիսեռ (HP/Canon)	**840**
	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ (HP/Canon)	**840**
	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկ Laser Jet 1100/5L/6L/4L/4P/1200/1150/1300/2100/4000 85A (Canon LBP 800/810/1120/2900/1210/725)	**630**
	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկ Xerox Phaser 3010	**630**
	Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Կարատրոնը Laser Jet 1100/5L/6L/4L/4P/1200/1150/1300/2100/4000 85A (Canon LBP 800/810/1120/2900/1210/725)	**630**
	Մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը Laser Jet 1100/5L/6L/4L/4P/1200/1150/1300/2100/4000 85A (Canon LBP 800/810/1120/2900/1210/725)	**630**
	Դիագնոստիկա	**1260**
	Ընդամենը	**11760**

* Ներկայացված միավոր գները հաշվարկված են Պայմանագրի 4.2 կետով սահմանված բանաձևի կիրառմամբ:

Պարտադիր պահանջ՝

- Ծառայությունների գները ներառում են դրա ընթացքում օգտագործվող բոլոր նյութերի ու պահեստամասերի գները:
- Պահեստամասերը պետք է տրամադրվեն Կատարողի կողմից և լինեն չօգտագործված:
- Ծառայությունների մատուցման ժամանակ փոխարինված պահեստամասերի կամ այլ սարքավորումների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից Ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 180 օրացուցային օրը:

- Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցելու օրվա և ժամի մասին:
- Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի սարքը կամ սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցվելու օրվանից 5 օրացուցային օրվա ժամկետում:
- Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի պահանջով ծառայությունները պետք է մատուցվեն նաև տեղում (ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեում):
- Կատարողի մոտ պահեստամասի բացակայության դեպքում, կարող է սահմանվել Պատվիրատուի հետ համաձայնեցված ծառայության մատուցման այլ ողջամիտ ժամկետ, որի ընթացքում կատարողի կողմից Պատվիրատուին ժամանակավոր օգտագործման համար պետք է տրամադրվի աշխատող այլ համանուն սարքեր, սարքավորումներ:
- Եթե Պատվիրատուին հայտնի չէ սարքի կամ սարքավորման անսարքության պատճառը, ապա Կատարողը իրականացնում է դիագնոստիկա և եզրակացություն է տրամադրում Պատվիրատուին, որից հետո Պատվիրատուն, ելնելով նպատակահարմարությունից, իր հայեցողությամբ, դադարեցնում կամ հանձնարարում է կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված, իր կողմից մատնանշված ծառայության մատուցումը:

Աղյուսակ 2

	Համակարգիչների և մոնիտորների սպասարկում	**Ենթածառայության միավոր գինը* /ՀՀ դրամ/**
Չափաբաժին 2. *Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ*	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ / 775 սոկետ / Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ (Cooler for CPU 775 socket Intel original)	**3500**
	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ /1155 սոկետ/ Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ (Cooler for CPU 1155socket Intel original)	**3500**
	MB նորոգում	**2100**
	MB փոխարինում ներառյալ 775 սոկետ ՎԳԱ օն բորդ, (775 socket, VGA on board)	**17500**
	MB փոխարինում ներառյալ 1155 սոկետ ՎԳԱ օն բորդ, (1155 socket, VGA on board)	**17500**
	CPU փոխարինում ներառյալ Core i3 3220 (Intel Core i3-3220)	**17500**
	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՄՀՑ (DDR2 2048M 667/800MHZ)	**4200**
	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1066/1333/1600 ՄՀՑ (DDR3 2048M 1066/1333/1600MHZ)	**5600**
	VGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 220 1Գբ ՊիՍիԱյ-էքսպ (Nvidia GF GT 220 1Gb PCI Exp)	**5600**
	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 500Գբ ՍԱՏԱ, 7200ռպմ (HDD 500 Gb SATA, 7200 rpm)	**28000**
	DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW)	**7000**
	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450Վտ (Power suply unit for P4 Case 450w)	**7000**
	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000)	**2800**
	Ղեկավարող սալիկի վերանորոգում	**700**
	Վերածրագրավորում	**700**

	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 19"	3500
	Դիագնոստիկա	2800
	Ընդամենը	**129500**

* Ներկայացված միավոր գները հաշվարկված են Պայմանագրի 4.2 կետով սահմանված բանաձևի կիրառմամբ:

Պարտադիր պահանջ՝

1. Փոփոխման ենթակա մասը պետք է լինի նոր և չօգտագործված:
2. Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից պահանջը ներկայացվելու օրվանից՝ հինգ օրացուցային օրվա ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:
3. Ծառայությունների մատուցման ժամանակ փոխարինված պահեստամասերի կամ այլ սարքավորումների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից Ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 180 օրացուցային օրը:
4. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցելու օրվա և ժամի մասին:
5. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի սարքը կամ սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցվելու օրվանից 5 օրացուցային օրվա ժամկետում:
6. Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի պահանջով ծառայությունները պետք է մատուցվեն նաև տեղում (ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեում):
7. Եթե Պատվիրատուին հայտնի չէ սարքի կամ սարքավորման անսարքության պատճառը, ապա Կատարողը իրականացնում է դիագնոստիկա և եզրակացություն է տրամադրում Պատվիրատուին, որից հետո Պատվիրատուն, ելնելով նպատակահարմարությունից, իր հայեցողությամբ, դադարեցնում կամ հանձնարարում է կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված, իր կողմից մատնանշված ծառայության մատուցումը:
8. Ծառայությունների գները ներառում են դրա ընթացքում օգտագործվող բոլոր նյութերի ու պահեստամասերի գները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024065 ՀՎՀՀ 02505554	«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ ք.Երևան, Եղբայրության 1-ին նրբ. 14 «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510052737280100 ՀՎՀՀ 02290157
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
« 12 » մարտի 2021 թ. կնքված
***«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/4-1»** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120-1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	-	-	135000	337500	337500	337500	675000	675000	675000	1350000	1350000	1350000	**1350000**
2	50311120-2	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	-	-	30000	75000	75000	75000	150000	150000	150000	300000	300000	300000	**300000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
** Վճարումները կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024065
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ
ք.Երևան, Եղբայրության 1-ին նրբ. 14
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100527372801 00
ՀՎՀՀ 02290157

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 12 » մարտի 2021 թ. կնքված
***«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/4-1»** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 12 » մարտի 2021 թ. կնքված
***«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/4-1»** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն